

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրատարները ըստ 2 կոպեկի:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ԱՌԱՋԻՆԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պարագրաֆով: Մերը կը ստանանք սեփական
ՀՅՈՒՍԿԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրակարգ և Բարձրակարգ փողոցների ան-
կիւնում, Թաւմաշիւի տանը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է գիտնէ հետեւեալ հա-
ցենով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Արագածից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԿԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեսնական ճշմարտութիւն. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՆ.
—ՀՅՈՒՍԿԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

I

«Մշակի» բաժանորդագրութիւնը առա-
ջիկայ 1887 թվի համար արդէն բացված
է: Մինչև նոր տարին մնում են մօտ երկու
ամիսներ միայն, իսկապէս մի ամիս և կէս:
Այդ տասն ամսվայ միջոցում «Մշակը»
նոյն ուղղութեամբ էր ընթանում, որով ըն-
թանում էր տասն և երեք տարի շարու-
նակ, մազի չափ անգամ չը շեղվելով իր
առաջվայ, մի անգամ նախագծված ուղղու-
թիւնից:

Լրագիրը պէտք է իր սեփական որ և է
արժանաւորութիւն ունենայ, պէտք է հա-
մադրված լինի որ իր գոյութեամբ օգուտ է
բերում ժողովրդին, անկեղծ և ամբողջ
սրտով ծառայում է ազգին, որպէս զի
համարակալութիւն ունենայ յորդորել ժողո-
վուրդը բաժանորդ գրվելու: Եւ իսկապէս
յորդորելն էլ աւելորդ է, երբ լրագիրը
գրում է, համադրված է որ օգուտ է բե-
րում, որ իր գոյութիւնը անհրաժեշտ է
ազգի կրթական գործին, նրա քաղաքակր-
թական առաջադիմութեան, պրօգրէսի
գործին:

Ժողովուրդը պէտք է գրվի լրագրին,
երբ տեսնում է այդ լրագրի ընթերցանու-
թեան մէջ իր համար օգուտ, երբ լրագրի
գոյութիւնը իր մտաւոր կարգացման, իր
հասարակական առաջադիմութեան համար
անհրաժեշտ է համարում:

Ժողովուրդը պէտք է գրվի լրագրին նրա
արժանաւորութիւնները աչքի առաջ ունե-
րով և ոչ թէ ի նկատի առնելով օրինակի,
որ լրագրի խմբագրին պէտք է նիւթապէս
պահպանել, որովհետեւ խմբագիրը նիւթա-
կան կողմից նեղ գրութեան մէջ է, թէև
նրա թերթը անպիտան լինի, անբովան-
դակ, նոյն իսկ հասարակաց կարծիքը մո-
լորեցնող, ամբողջ անբարոյականացնող...

Կա արդէն բարոյապէս ամենաստոր
տիճանի վրա ընկած լինել կը նշանակէ,
երբ խմբագիրը, յորդորելով ժողովուրդը իր
թերթին գրվելու, անում է այդ ոչ թէ
ազգի լուսաւորութեան անունով, ընդհա-
նուր մարդկային քաղաքակրթութեան ա-
նունով, իր թերթի բազմամեայ գործունե-
ութեան արժանաւորութիւնների և ազգին
մատուցած բազմաթիւ ծառայութիւնների
վրա հիմնելով.—այլ իր անձնական զոյու-
թիւնը պահպանելու ազդեցութիւն:

Եթէ լրագիրը որ և է արժանաւորու-
թիւն ունի,—աւելորդ է աղաչել, աղիո-
ղորմ կերպով աղերսել որ գրվին ու պահ-
պանեն թերթը: Իսկ եթէ ոչինչ արժանա-
ւորութիւն չունի,—արտասուելի կերպով

աղերսելն էլ աւելորդ, սպարդիւն ու անօ-
գուտ է:

«Մշակի» գոյութիւնը մի անհրաժեշտ
պահանջ է դարձած հայերի համար և
մենք հաւատացած ենք, որ առաջիկայ
տարին էլ և հետեւեալ տարիներն էլ, որ-
քան նա գոյութիւն կունենայ, հայ ազգը
կը գրվի «Մշակին» նոյն չափով, որ չափով
գրվել է մեր լրագրին նրա գոյութեան
տասն և չորս տարվայ ընթացքում, առանց
որ մենք յորդորենք հայերին բաժանորդ
գրվելու:

II

Եւ այդ դեռ հարց է. բարոյապէս իրա-
ւունք ունի արդե՞ք մի մարդ, որ ոչինչ
ներքին կոչում չէ գրում իր մէջ լրագիր
հրատարակելու, պուրջիցիստ, հրապարա-
կախօս լինելու, իրաւունք ունի նա արդե՞ք
յանձն առնել առաջնորդելու, ղեկավարելու
հասարակաց կարծիքը, այդ գործին բոլո-
րովին անպատրաստ լինելով, միայն այն
պատճառով որ մի բանով պէտք է ապրի,
և այդպիսով փոխանակ ղեկավարելու՝ շփո-
թեցնում, մոլորեցնում, անբարոյականաց-
նում և հասարակաց կարծիքն ու հասա-
րակաց խիղճը:

Հազար անգամ ասված է որ ամենամեծ
յանցանք է, երբ պատանին, երիտասարդը
գիմնազիայում ուսում աւարտելուց յետոյ,
ինքն իրան ասում է «մի բանով հ'օ»,
պէտք է ապրեմ, ուրեմն ես համարաւոր
բժշկական ֆակուլտետը կը մտնեմ, որով-
հետեւ գոնէ դրանով, ինչքան էլ վատ բը-
ժիշկ կը լինեմ, վատ թէ լաւ ապրել կը
կարողանամ, թէև ես պէտք է ինձ ու ինձ
խոստովանեմ որ ոչ համակրում եմ բժշ-
կականութեանը, ոչ էլ իմ մէջ ներքին հա-
կում, որ և է կոչում եմ գրում դէպի բը-
ժշկի արհեստն ու գործը:

Եւ այդ տեսակ մարդ ամենամեծ յան-
ցանք արած կը լինի, այդ տեսակ բժիշկ
ամենաողորմելի բժիշկ կը դառնայ, որ ոչ
թէ միայն օգուտ չի տայ ջառագար մարդ-
կութեանը, այլ ամենամեծ վնաս էր կը
հասցնի իր օգնութեանը դիմողներին:

Թող այդպիսի մարդ թողնի բժշկակա-
նութիւնը, հեռանայ ասպարիզից, որ նա
ընտրել է ոչ թէ ներքին, այնպիսի ճիւղ-
տում, հակում, կոչում գալով դէպի այդ
մասնագիտութիւնը, այլ միայն ստոր նիւ-
թական հաշիւի առաջնորդելով:

III

Ձը պէտք յոյս կորցնել որ կը զայ ժա-
մանակ, երբ այդ տեսակ բժիշկներին
հասարակաց կարծիքը կը պատժի, անտես
առնելով նրանց գոյութիւնը, կը զայ ժա-
մանակ երբ հասարակաց կարծիքը, հասա-
րակաց խիղճը առաջնորդել յանձն առնող
հրապարակախօսներին էլ, որոնք իրանք
ոչինչ կարծիք, ոչինչ համոզմունք, ոչինչ
խիղճ չունեն, այլ յանձն են առնում լրա-
գիր հրատարակելի սխալեցնելով, մոլորեց-
նելով, խաբելով, անբարոյականացնելով ժո-

ղովուրդը, ամբոխի պնդէս էլ խաւար
մթնոլորդի մէջ աւելի էլ խաւար մտցնե-
լով, միայն դրա համար որ իրանք միջոց
ունենան ապրելու, այդ տեսակ հրապարա-
կախօսներին, որոնք ամենամեծ խեղճ կերպով
տոնակոյն են անում հրապարակախօսի վը-
սեմ կոչումը,—ժողովուրդը կը պատասխա-
նի. «Գնա, քեզ համար մի այլ ասպարէզ
ընտրիր», եթէ ապրել ես ուզում ուրիշ
գործ գտիր, գործ չատ կայ աշխարհիս ե-
րեսին: Բայց ապրելու իրաւունք և միջոց
ունենալու համար յանցանք է քո կողմից
որ յանձն առնելով հրապարակախօսու-
թեան վսեմ գործը, ժողովուրդը դէպի
լոյսը առաջնորդելու աստուածահաճոյ և
մարդահաճոյ գործը, դու փոխանակ մեր
մէջ քաղաքակրթութիւն և լոյս մտցնելու,
ինքդ խաւարի դաւակ լինելով, ամեն ջանք
ես թափում աւելացնելու մեր մէջ այն
խաւարը, որ պնդէս էլ անթափանց,
թանձր, սև, դարաճատ մարախուղի պէս
պատել է մեր շուրջը, կուրացրել է մեր
աչքերը և սպառել է մեր շունչը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆԿԱՅ

Հոկտեմբերի 15-ին

Մարդասիրական զգացմունքից զուրկ մարդիկ
միմյանի խորշում են բարեբարութիւն անելից:
Այդպիսի զգացմունքներն երբեմն աճում են մար-
դուս մէջ ընտանեացի, իսկ մեծ մասամբ արուես-
տական կերպով.—այսինքն այդ թեւադրութեամբ:
Անտէր, անօգնական, ֆիզիկական և բարոյական
հարստութիւնից զրկված դասակարգին նեղակ և
պաշտպան լինելը ոչ թէ միայն բարեբարութիւն
է, այլ դա մի ընդհանուր, մարդկային պարտաճա-
նաչութիւն է: Այս, բարոյական պարտաճանաչու-
թիւնը մարդկութեան իրեւելով լինելու է, և դա
աստիճանաբար պիտի աճի ընդհանուր մարդկային
զարգացման հետ: Ուղղութիւն, աղքատ դասակարգը
անհատների սեփականութիւն չէ, այլ ընդհանուր
մարդկային: Մեր հայրենի և պապերը նոյնպէս,
չը նայելով ստոր, սխալատեղական, միակողմանի
զարգացմանը, այնու ամենայնիւ մարդասիրական
զգացմունքից զուրկ չէին, որպիսին աւանդաբար
ժառանգել են և նոյն յաջորդները,—օգնելով նե-
ղելը, կարեկցելով աղքատներին և օժանդակելով
դժբաղդ ճակատագրի դոհներին: Գեռ. Կարսեցի մէջ
հայերը ունեցել են աղքատներին հովանաւորող
հոգաբարձութիւն, թէ դաղթականութեան միջո-
ցին և թէ Ախալցխայում հաստատված օրերից
այդ մարդասիրական ոգին արմատացած է եղել
նոյն մէջ: Գաղթականութեան առաջնորդ Կարա-
պետ արքեպիսկոպոս Բաղրատունիս ի մօտոյ ծա-
նօթ լինելով իր հօտի կարկէններին և կենսական
պահանջներին, նա իր սեփական կալուածների եկա-
մուտների 1/3 մասը կտակում է աղքատներին.
բայց նորա վախճանիկուց յետոյ աղքատները
ըրկվում են իրանց բաժնից: 1862 թվականներին
տեղական հայ հասարակութեան խնդրագրի հա-
մաձայն ս. սինօղը եկեղեցապատկան խանութիւն-
րի եկամուտը վճարում է մշտապէս յատկացնել
աղքատներին նպաստելու, իսկ միւս եկամուտնե-
րը՝ դպրոցին: Անտիոյ այդ կարգադրութիւնն էլ
այն ժամանակից մնացել է անկատար. իսկ աղ-
քատների հոգաբարձութիւնը չարունակելի է ե-
ղել իր գործունէութիւնը հանգանակելով կամաւոր
նուիրատուութիւններ: 1882 թվականին մարմնավոր
իշխանութեան կարգադրութեամբ երբ արգելեցին
հրապարակական հանգանակութիւնը, դադարեցաւ
և հոգաբարձութեան գոյութիւնը: 1884 թվակա-
նին Վարկիսի հայոց Բարեբարութեան ընկերու-
թեան տեղական բաժնի հաստատվելուց յետոյ,
հասարակութիւնը խնդրեց տեղական վարչութիւ-
նից իր հովանաւորութեան տակ առնել աղքատաց
հոգաբարձութիւնը և վերանորոգել նորա գործու-

նէութիւնը: Տեղական բաժնից յարգեց հասարա-
կութեան խնդիրը և նոյն տարվայ մարտի 30-ին
օրինաւոր ընտրութեամբ և հոգեւոր կառավարու-
թեան հաստատութեամբ ներկայացրեց վարչու-
թեան իր ընտրելիներին: Վարչութիւնը ընդունե-
լով նոյն իբրեւ օժանդակիչ անդամներ աղքատնե-
րին նպաստելու գործում, իր մի անդամի նախա-
գահութեամբ հովանաւորում էր նոյնա: Նորընտիր
երկու հոգաբարձութիւնը շարունակեցին իրանց
պաշտօնը մինչև 1885 թվի դեկտեմբեր ամիսը.
այնուհետեւ, հանդամանքներից հարկադրված, հրա-
ժարական տուին իրանց պաշտօնից: Որովհետեւ հա-
սարակութեան յայտնի չէ մինչև ցարդ նոյնա գոր-
ծունէութեան արդիւնքը, աւելորդ չի լինի, թէպէտ
ուշ, մի համառօտ տեղեկութիւն տալ նրան հոգա-
բարձութեան գործունէութեան մասին: Ահաւասիկ
պատճէր յանձնողական և ստացողական թերթի:
«Աղքատների հոգաբարձութեան երկու անգամ
տուած հրաժարականների վրա հիմնված, Բարե-
բարձական ընկերութեան տեղական-բաժնի վար-
չութիւնը յանձնարարել էր իր անդամներից մինին
—պ. Արշակ Յակոբջանեանցին—ստանալու հոգա-
բարձութեանը, մեր գործունէութեան վերաբե-
րեալ բոլոր հաշիւներն և թղթերը: Այսօր պ. Ար-
շակ Յակոբջանեանց, զինելով երկամտացոյցի, գտաւ,
որ հոգաբարձութեան հաստատված օրից—այն է
1884 թիւ մարտի 30-ից մինչև 30-ն դեկտեմբերի
1885 թիւ եղել է մուտք (արդիւնք) 1642 ռուբլի
84 կօպ., իսկ ծախք նոյնքան միջոցում 1610
րուբլի 18 կօպ., հանելով ընդհանուր ծախքը
մուտքից, մնում է առձեռն պատրաստի դրամ
32 ռուբլի 66 կօպ.: Յիշեալ դրամը հոգաբարձու-
թիւն յանձնեց պ. Արշակ Յակոբջանեանցին:
Բացի 32 ռ. 66 կօպ. դրամից, նոյնպէս յանձնու-
ցան պ. Յակոբջանեանցին և հետեւեալները. 1)
պարտատուրակ Ա. Քէշիշեանցի 10 ռուբլի, (1885
թ. յունվարի 26-ից, երկու ամիս ժամանակով).
2) մուրհակ վ. Սաւաֆեանցի 15 ռուբլի, (1885
թ. յուլիսի 26-ից, ցարահան). 3) մուրհակ Ե. Սա-
հակեանցի և Ա. Քէշիշեանցի 15 ռուբ. (յունվարի
մէկից մինչև կէս ամիս ժամանակով). 4) մուրհակ
Մ. Պիճիկեանցի 12 ռուբլի (1882 թ. հոկ-
տեմբերի 18-ից, ամսական մէկ ռուբլի վճարելու
պայմանով). 5) մուրհակ Ն. Գեօկչօղլեանցի 12
րուբ. 67 կօպ. (1884 թ. մարտի մէկից, մէկ տա-
րի ժամանակով). 6) երաշխաւորագրի 5. Աբ. Ղա-
ղէկեանցի, որ նա առած է աղքատաց զանաւա-
նից Զար. խորոզեանի համար 10 ռուբ. (1881 թ.
յուլիսի 21-ից, երեք ամիս ժամանակով): 7)
Մուրհակ Աշխիկ Չիւ-Ախրեանի 11 ռ. 40 կ.
(1878 թ. ապրիլի 25-ից մի ամիս ժամանակով. այդ
մուրհակից ստացված է 4 ռուբլի). 8) պարտա-
մուրհակ Գեորգ Ղարբիեանցի 79 ռուբ. 50 կօպ.
(1876 թ. յուլիսի 28-ից վեց ամիս ժամանակով
այդ գումարից վճարված է 50 ռ., մնում է 29 ռ.
50 կ.). 9). ստորագրութիւն Ն. Պիճիկեանցի, որ
նա վարձել է աղքատաց պատկանեալ խանութը
ուրիշ ռուբ. տարեկան (1879 թ. հոկտեմբերի 16-ից).
10) վարձավեր Զար. Գահիշեանի, որ նա վար-
ձել է աղքատաց կրպակը (1883 թ. նոյեմբերի
15-ից, տարեկան ութ ռուբլիով). 11) մի մոլորակ
զանազան թղթեր չին հոգաբարձութեան վերա-
բերեալ, որոց մէջ պարտականութիւն են հետեւեալներն.
ա) Զով. Յակոբջանեանցի, վ. Վարդանեանցի,
Մ. Մուրաֆեանցի և Գ. Ղալաֆեանցի երաշ-
խաւորական ստորագրութիւնը Գ. Կարբիեանցի
79 ռուբլի պարտքի մասին. բ) թուղթ հոգեւոր
կառավարութիւնից, որով ս. Սինօղը եկեղեցա-
պատկան կրպակները յատկացնում է աղքատներին
(պատճէն). դ. դիր վաճառման, որ աղքատաց հո-
գաբարձութիւնը գնած է մի կրպակ յանուն աղ-
քատաց. զ) համախօսական թերթ Սար. Ն. Տէր-
Մկրտչեանի 150 ռուբլի փոխարկաբար տալու
համար, որպիսի գումարից ստացել է միայն 40
րուբլի. ե) երեք անձանց ստորագրութեամբ երեք
րուբլի մի մուրհակ. զ) տասը հատ կաղնած մա-
տեաններ չին հոգաբարձութեան գործերից սկսեալ
1855 թվականից մինչև 1883 թվականը. 12) չորս
հատ փայտեայ զանձանակներ իրանց լանային-

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.